ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Ավագ Հարությունյանից
(դիմողի անուն, ազգանուն)

Երևան Ալիխանյան 2/214,091401342, Info@maran.am
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

՝Հայ գինեգործների միություն,, իրավաբանական անձանց միություն,286.150.04126
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ **Հայ գինեգործների միությանը** ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման պատճեն.
2. Անձնագրի պատճեն.
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.
4. Հետաքրքրվածության նամակ.
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ.

Դիմող՝ Ավագ Հարությունյան

< 03 > Մայիս 2016 թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016 թ.
Մուտք N Vh/5253-16

ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN ASSOCIATION OF WINEMAKERS
Երևան, Վաղարշյան 18/18, հեռ/ֆաքս. (374 10) 272530
18/18 Vagarshyan ave., Yerevan, tel/fax: (374 10)272530
e-mail: armwinemakers@gmail.com

№ 31/1

20.05.2016

ՀՀ Գյուղատնտեսության նախարար

Պարոն Ս.Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի № 1516-Ն որոշման համաձայն ՀՀ Գյուղատնտեսության նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով ստեղծվող նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկելու համար Հայ գինեգործների միությունից առաջարկում ենք միության նախագահ Ավագ Հարությունյանի (հեռ.՝ 091 40 13 42) թեկնածությունը:

Հարգանքով՝

ՀԳՄ նախագահ Ավագ Հարությունյան

Ամփոփ տեղեկանք “Հայ գինեգործների միություն” հասարակական կազմակերպության վերջին երկու տարում ծավալած գործնեության վերաբերյալ

Վերջին երկու տարում ի թիվս հասարակական կազմակերպության համար տիպիկ կանոնադրական հիմնական աշխատանքների (ճյուղի զարգացման մարտավարության և ռազմավարության մշակում, գինու տուրիզմի և ընդհանրապես անդամների շահերի պաշպանությանը նվիրված հանդիպումների, սեմինարների, ժողովների կազմակերպում և այլն) միությունը համապատասխան կառույցների հետ և աջակցությամբ զբաղվել է ճյուղի իրավական դաշտի բարելավմանը նպաստող կոնկրետ առաջարկների ձևավորմամբ, օրենսդրական ակտերի նախագծերի մշակմամբ և դրանց ընդունման լոբբինգով: Մասնավորապես խոսքը վերաբերում է հետևյալ հիմնական բնագավառներում նախանշված ոլորտներում կատարված և իրականացվող աշխատանքներին.

1. ֆիլոքսերայի դեմ պայքարի և վարակի տարածման կանխարգելում
2. գինու ակցիզային հարկի բեռի նվազում
3. ակցիզային դրոշմանիշների տրամադրման քաղաքականության վերանայում
4. չօգտագործված ակցիզային դրոշմանիշների վերադարձման կարգ
5. խաղողի օղու արտադրման համար նախատեսված պետական տուրքի վերանայում
6. հայկական կոնյակի արտադրության համար նախատեսված տարեկան տուրքի չափի վերանայում գործարանի մասնաճյուղի համար
7. գինեգործության համար նախատեսված օժանդակ նյութերի ներմուծման մաքսային ռեժիմների վերանայում
8. անմաքս առևտրային խանութներից գնվող ԵՏՄ ծագմամբ ալկոհոլային խմիչքների թույլատրվող ծավալների բարձրացում
9. մաքսային պահեստներում ակցիզային ապրանքների առք ու վաճառքի թույլտվություն:

Հակիրճ վերլուծություն ՀՀ ԳՆ վերջին երեք տարում գինեգործության բնագավառում իրականացված քաղաքականության վերաբերյալ

Վերջին երեք տարում տարում ոլորտում նախարարության կողմից իրականացվել են մի շարք կարևորագույն աշխատանքներ, որոնք էական նշանակություն են ունեցել խաղողագործության և գինեգործության զարգացման գործում: Դրանցից կարելի է օրինակ նշել հետևյալները.

- “Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին” ՀՀ օրենքի վերաբերյալ: Նախարարության ջանքերով և աջակցությամբ վերջին երեք տարում այդ օրենքում կատարվել են գինեգործների և սպառողների շահերից բխող մի շարք փոփոխություններ և լրացումներ: Ընդունվել են նաև կառավարության համապատասխան որոշումներ՝ ուղղված օրենքի կիրակման մեխանիզմների կատարելագործմանը:
- Խաղողի իրացմանը, դրա արտահանմանը և վերամշակողների կողմից մթերմանը ուղղված միջոցառումներ:
  Իրականացված աշխատանքները հնարավորություն տվեցին գրեթե ամբողջությամբ իրացնել գյուղացիական տնտեսությունների բերքը: Պետք է նշել, որ այս աշխատանքներն ավելի շատ ունեն սոցիալական և քաղաքական ուղղվածություն, քան տնտեսական հիմնավորում: Սա իհարկե առավել շատ ուղղված է գյուղացիների և խաղող արտադրող մյուս փոքր սուբյեկտների շահերի պաշտպանությանը, սոցիալական լարումների նվազմանը և փրկություն է գյուղացու համար:
- Նախորդ կետում բերված որոշ բացասական միտումների (որոշ դեպքերում խախտվում է հավասարակշռությունը ալկոհոլի շուկայում, առաջանում են անարդար մրցակցության էլեմենտներ,խաղողի և գինու առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն, խաղողի մթերման գնի վտանգավոր նվազում, խաղողի դիմաց գյուղացիներին ոչ ժամանակին և ոչ լրիվ փոխհատուցում) նվազման համար նախարությունը իրականացնում է աշխատանքներ և միջնորդում է վերամշակող ընկերություններին առավել նպաստավոր պայմաններով վարկերի տրամադրման համար, որպեսզի ձեռք բերված դրամի մեծ մասը վճարվի գյուղացիներին: Կարելի է թվարկել մի քանի տասնյակ նման միջնորդություններ, որոնց արդյունքում էապես բարձրացել է վճարումների ծավալները:
- Խաղողի օղու արտադրման համար նախատեսված պետական տուրքի մասին: Շնորհիվ նախարարության հետևողական աշխատանքի՝ լուծվել է այդ չափազանց կարևոր հարցը: Պետական տարեկան տուրքը 15 մլն դրամից իջել է 50000 դրամի: Սա էապես կնպաստի ճյուղի զարգացմանը, արտահանումների ծավալների մեծացմանը և մթերվող խաղող քանակությունների աճին:

- Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ օտարերկրյա շահագրգիռ կազմակերպությունների հետ արտահանման ծավալներ և շուկայի դիվերսիֆիկացման համար:

Հաստատված է
ՀՀ կառավարության 1999 թվականի
դեկտեմբերի 2-ի N 53 որոշմամբ

ՎԿԱՅԱԿԱՆ

02Ա 049725

Իրավաբանական անձի պետական գրանցման

,,ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ,, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
(անվանումը)
ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

գրանցված է իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում

Գրանցման համարը 286.150.04126

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը 14.02.2001թ.

Իրավաբանական անձի ծածկագիրը 37498259

Իրավաբանական անձի տեսակը /Ոչ առևտրային/

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Ա.Տ.

«20» փետրվարի 2001 թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 003

Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 02Ա 049725

Անվանումը ,,ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ,,
Իրավաբանական անձանց միություն

Գտնվելու վայրը (հասցեն)

~~Գործադիր մարմնի ղեկավարի/ նախագահ/~~

Այլ տեղեկություններ գրանցում՝ 22.08.2006թ.
նախագահ՝ Ավագ Հարությունյան/անձնագիր ԱՁ 0219954
տրված 28.03.1998թ. 057-ի կողմից,բնակության
վայրը՝ Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան/:

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Ա.Տ.

«23» ՕԳՈՍՏՈՍԻ 2006 թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 002

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 02Ա-049725

Անվանումը ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը (հասցեն)

Այլ տեղեկություններ անվանման և կանոն.փոփոխ.08.05.02թ.

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ. «13» մայիսի 2002 թ.

ՀՀ Կառավարության 2000 թվականի
հունիսի 14-ի N 315 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 02Ա-049725

Անվանումը ,,ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ,,ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը (հասցեն) 375010,ք.Երևան
Ե.Կողբացու 42/55

Այլ տեղեկություններ

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրությունը)

Կ.Տ. «20» փետրվարի 2001 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
իրավաբանական անձանց միության
մասնակիցների
25.04.2002թ. կայացած
ընդհանուր ժողովի կողմից
Արձանագրություն թիվ 4

Միության նախագահ՝

Ա.Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
Գրանցման թիվ 286.150.04126
Գրանցման օրը 14.02.2001թ.
Վկայական 02Ա 049725

Թիվ 1.3 փոփոխությունը
08. 05. 2002թ. գրանցվել է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ

Բաժնի պետ՝

Ա.Թորոսյան

«ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/փոփոխություն/

Միության կանոնադրության տիտղոսաթերթի վրա եւ ամբողջ տեքստում միության անվանումը կարդալ՝

ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Կանոնադրության 1.5. կետը կարդալ հետեւյալ կերպ՝

հայերեն՝	ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝	СОЮЗ АРМЯН ВИНОДЕЛОВ
անգլերեն՝	ARMENIAN ASSOCIATION OF WINEMAKERS

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻԱՄ կանոնադրության (գրանցված 14.02.2001թ.) բաղկացուցիչ մասը:

ք.Երեւան - 2002

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայ գինեգործների միություն»

իրավաբանական անձանց միության

անդամների հիմնադիր ժողովում

10.02.2001 թ.

Նախագահ՝ Ա. Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐՈՒՄ

Գրանցման N 226 150 04126

Գրանցման օրը 14.02. 2001թ.

Վկայական 020 049725

Պետական Ռեգիստրի Սպանդարյանի

տարածքային բաժնի պետ՝

Վ. Թորոսյան

«Հայ գինեգործների միություն»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան - 2001թ.

1. *Ընդհանուր դրույթներ*

1.1 «Հայ գինեգործների միություն» առևտրային կազմակերպությունների միությունը, /այսուհետև Միություն/, իր անդամների /այսուհետև Մասնակիցներ/ ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ստեղծված իրավաբանական անձանց միություն է, որը գործում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքով, ՀՀ այլ իրավաբանական ակտերով, միջազգային պայմանագրերով ու համաձայնագրերով և սույն կանոնադրությամբ:

1.2 Միությունը գործում է օրինականության, կազմավորության, իրավահավասարության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքով:

1.3 Միությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.4 Միության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ե. Կողբացու 42շ. բն. 55

1.5 Միության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» իրավաբանական անձանց միություն

ռուսերեն լրիվ՝ "СОЮЗ АРМЯН ВИНЕДЕЛЬЦЕВ"

անգլերեն լրիվ՝ "ARMENIAN ASSOCIATION OF WINEMAKERS"

2. *Միության գործունեության նպատակը և առարկան*

2.1 Միության նպատակները՝

Միության նպատակն է աջակցել Հայաստանի գինեգործության և խաղողագործության զարգացմանը, ժամանակակից փորձին սարքավորումների ներդրմանը, մասնագետների վերապատրաստմանը և վերապատրաստմանը, նրանց պրոֆեսիոնալ իրավունքների, պատվի և արժանապատվության, արտաքին և ներքին շուկայում արտադրողի և սպառողի իրավունքների պաշտպանությանը:

2.2 Միության գործունեության առարկան՝

- Հայաստանի և մյուս պետությունների գինեգործների մասնակցությամբ հանդիպումների, սիմպոզիումների և կոնֆերանսների կազմակերպում
- Առաջավոր ձեռնարկությունների փորձի ընդհանրացում,
- Նպաստել խմիչքների մրցույթների և համտեսների կազմակերպմանը և անցկացմանը,
- Աջակցել մասնագիտական նորմատիվ ակտերի և նորմատիվա-տեխնոլոգիական փաստաթղթերի մշակմանն ու խմբագրմանը,
- Ամուր կապերի ստեղծում գիտահետազոտական միջազգային կազմակերպությունների հետ,
- Կազմակերպել վերապատրաստման, վերավորակավորման դասընթացներ,
- Օրենքով սահմանված կարգով տպագիր օրգանի հրապարակում,
- Օրենքով սահմանված կարգով, դուստր Ընկերությունների Միջոցով տնտեսական գործունեության իրականացում,
- Հայաստանի խոշոր գինեգործներին նվիրված հոբելյանական հավաքույթների անցկացում,

Միության մասնակիցներին, այդ թվում նաև գինեգործության հարցերովարտասահմանյան ոլորտների նպատակով, նյութական օգնության ցուցաբերում:

3.Միության մասնակիցները

3.1 Միության մասնակիցներ կարող են լինել ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ, իրավաբանական անձիք, որոնք գինեգործ են, կամ զբաղվում են գինեգործությամբ, խաղողագործությամբ, խաղողի և գինու արտադրությամբ, հետազոտմամբ, իրավական դաշտով և ընդունում են սույն կանոնադրությունը:

3.2 Առանձին դեպքերում Միության նախագահի համաձայնությամբ կարող են լինել ոչ գինեգործներ, բայց անձիք, որոնք կաջակցեն գինեգործությանը և ակտիվորեն կմասնակցեն Միության աշխատանքներին /մասնակիցների ցուցակը բերված է հավելվածում/ :

3.3.Միության մասնակիցները՝

-պարտավոր են յուրաքանչյուր ամիս պարտադիր կերպով վճարել անդամավճար,

-պահպանում են իրենց ինքնուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները,

-իրավունք ունեն անհատույց օգտվել Միության աջակցությունից:

3.4.Միության մասնակիցը հեռացվում է՝

1) Երկու ամիս անդամավճար չմուծելու դեպքում

2) Ընդհանուր ժողովի որոշմամբ

3) Սեփական նախաձեռնությամբ

4.Միության կարգավիճակը.

4.1.Միությունը գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

4.2.Միությունն ունի՝

-ինքնուրույն հաշվեկշիռ,

-հաշվարկային և այլ հաշիվներ,

-իր անվամբ և խորհրդանշանով կլոր կնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով),

-դրոշմակնիք և ձևաթղթեր,

-օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ և այլ նշաններ,

-սեփական առանձնացված գույք:

4.3.Միությունը կարող է՝

-իր անունից մասնակցել գույքային շրջանառությանը,

-ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,

-դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4.4.Միությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայքների պարտավորությունների համար, իսկ վերջիններս՝ միության պարտավորությունների համար:

4.5.Մասնակիցների կողմից Միությանը հանձնած գույքը հանդիսանում է վերջինիս սեփականությունը, որը օգտագործվում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակով:

4.6.Միությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ողջ գույքով:

4.7.Միության մասնակիցները՝ կանոնադրությամբ սահմանված չափով և կարգով, սուբսիդիար պատասխանատվություն են կրում Միության պարտավորությունների համար:

4.8. Միությունը պատասխանատվություն չի կրում իր մասնակիցների պարտավորություններ համար:

4.9. Միությունը իրավունք ունի՝

-ներկայացնել և պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,

-անդամակցել միջազգային կազմակերպությունների, ունենալ միջազգային կապեր օտարերկրյա կազմակերպությունների հետ կնքել համաձայնագրեր,

-հիմնադրել տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ կամ լինել դրանց մասնակիցը,

-ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ,

-իրականացնել ՀՀ օրենքով չարգելված այլ գործունեություն:

4.10.Օտարերկրյա պետություններում տնտեսական ընկերություններ, ընկերակցություններ հիմնադրելը և (կամ) դրանց մասնակցելը, ինչպես նաև ներկայացչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ ստեղծելը կատարվում է դրանց գտնվելու վայրի, երկրի օրենքներին և այլ իրավաբանական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:

5. Միության ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և հիմնարկները.

5.1.Միությունն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

5.2. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և հիմնարկները իրավաբանական անձ չեն ու գործում են Միության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

5.3. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Միության կողմից ու գործում են նրա տրված լիազորագրերի հիման վրա:

5.4. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքը տրամադրվում է Միության կողմից: Այդ գույքի արժեքը արտացոլվում է ինչպես ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ՝ Միության հաշվեկշռում ու համարվում է Միության սեփականությունը:

5.5. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գործունեության համար գույքային պատասխանատվություն է կրում Միությունը:

6. Միության գույքը.

6.1. Միությունը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակելի տներ և բնակարաններ, սարքավորումներ, դրամական միջոցներ, ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով, արժեթղթեր և այլ անշարժ կամ շարժական գույք:Միության գույքի արժեքն արտացոլվում է Միության ինքնուրույն հաշվեկշռում:

6.2. Միության գույքի ձևավորման աղբյուրներն են՝

- Միության մասնակիցների մուտքի, ինչպես նաև ամենամսյա պարտադիր դրամական վճարները և անդամավճարները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերված այլ գույք:

7. Միության մասնակիցների ընդհանուր ժողովը.

7.1. Միության մասնակիցների ընդհանուր ժողովը Միության կառավարման բարձրագույն մարմինն է և իրավասու է լուծել Միության կազմակերպման գործունեության հետ կապված ցանկացած հարց:

7.2. Միության մասնակիցների ընդհանուր ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ:

7.3. Միության մասնակիցների ընդհանուր ժողովը իրավազոր է, եթե նրան ներկա են մասնակիցների 2/3-ը:

7.4. Միության մասնակիցների ընդհանուր ժողովում յուրաքանչյուր մասնակից ունի մեկ ձայնի իրավունք, և Միության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ կամ լիազոր ներկայացուցիչների միջոցով:

7.5. Միության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

- Միության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը,
- Միության կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը,
- Միության կոլեգիալ, գործադիր, և վերստուգող մարմիններին նշանակելը և նրանց պաշտոնից ազատելը,
- Միության կոլեգիալ, գործադիր, մարմնի կազմը հաստատելը,
- Միության նոր մասնակից ընդգրկելը, Միության գործադիր և վերստուգող մարմինների հաշվետվությունների հաստատելը,
- Միության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներ ընդունելը,
- Միության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ մարմիններին:

7.6. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.7. Միության մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից ոչ ուշ, քան 15 օր հետո:

7.8. Միության մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը ստորագրում են բոլոր նախագահները:

7.9. Միության մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունում նշվում է՝

- ժողովի անցկացման տեղը և ամսաթիվը,
- ժողովի օրակարգը,
- Միության մասնակիցներին Միությունից հեռացնելը,
- ժողովին ներկաների անուն ազգանունները,
- Միության մասնակիցների ընդհանուր ժողովի մասնակիցների ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքներով ընդունված որոշումները:

8. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը

8.1. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողով կարող են գումարվել գործադիր մարմնի նախաձեռնությամբ Միության մասնակիցների 1/3-ի պահանջով, կամ միության վերստուգողի պահանջով՝ նախաձեռնողի օրակարգով:

8.2. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է պահանջ ներկայացնելու պահից տասնհինգ օրվա ընթացքում:

8.3. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը և օրակարգին վերաբերվող փաստաթղթերը Միության մասնակիցների ընդհանուր ժողովին է տրամադրում նախաձեռնողը՝ արտահերթ նիստ գումարելու մասին պահանջ ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:

8.4. Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը քննարկում է միայն օրակարգում եղած հարցերը:

9. Միության կոլեգիալ գործադիր մարմինը

9.1. Միության կոլեգիալ գործադիր մարմինը (այսուհետ Վարչություն) ընտրվում է Միությ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամանակով:

9.2. Վարչության անդամների կազմը հաստատում է Միության մասնակիցների ընդհան ժողովը միության նախագահի ներկայացմամբ:

9.3. Վարչության նիստերը գումարվում են տարեկան առնվազն 3 անգամ:

9.4. Միության գրանցումից հետո նրա գործունեության ընթացքում վարչության կազմ ընդգրկվող հիմնադիր-մասնակիցների թիվը չի կարող վարչության կազմի ընդհան քանակի կեսից պակաս լինել:

9.5. Վարչության արտահերթ նիստերը գումարվում են միության նախագահի կողմից նախաձեռնությամբ, կամ վարչության անդամների 1/3-ի կամ միության Վերստուգ նախաձեռնությամբ:

9.6.Վարչության նիստերը իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Վարչությ անդամների կեսից ավելին:

9.7. Վարչության որոշումները ընդունվում են նիստին մասնակից անդամների ձայների պա մեծամասնությամբ:

9.8. Վարչության յուրաքանչյուր անդամ օգտվում է մեկ ձայնի իրավունքից, քվեարկությ ժամանակ ձայների հավասարության դեպքում Միության նախագահն օգտվում է վճռակա ձայնի իրավունքից:

9.9. Վարչությունն իրավասու է.

- հաստատել միության տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվեկշիռները,
- սահմանել Վարչության գործունեության կարգը,
- հիմնադրել իրավաբանական անձինք, այդ թվում նաև լրատվական և հրատարակչակա գործակալություններ, կամ մասնակցել դրանց,
- որոշել Միության մասնակիցների ընդհանուր ժողովի անցկացման տեղը, օրը և ժամը,
- հաստատել Միության մասնակիցների ընդհանուր ժողովի օրակարգը,
- Միության աշխատանքները կոորդինացնելու համար ստեղծել հանձնաժողովներ աշխատանքային խմբեր,
- հրավիրել մամուլի ասուլիսներ,
- կազմակերպել գիտական ժողովներ և մասնագիտական հարցերի շուրջ այլ բազմաթիվ քննարկումներ,
- ընդունել սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումներ,
- Միության մասնակիցներին հեռացնել Միությունից:

10. Միության նախագահը

10.1.Միության նախագահը ընտրվում է Միության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամանակով:

10.2. Միության նախագահի ընտրությունները կատարվում են գաղտնի քվեարկությամբ:

10.3. Միության նախագահի թեկնածուն առաջադրվում է հիմնադիրներից:

10.4. Միության նախագահը՝

- [illegible] է Միության ընթացիկ գործերը,
- [illegible] լիազորագրի հանդես է գալիս Միության անունից,
- վավերացնում է Միության ֆինանսական փաստաթղթերը,
- Միության անունից կնքում է գործարքներ, համաձայնագրեր և վավերացնում է այլ փաստաթղթեր.
- [illegible] է լիազորագրեր,
- [illegible] է հանձնաժողովներ ու աշխատանքային խմբեր Միության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով,
- նշանակում և ազատում է միության ներկայացուցիչների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարների,
- նշանակում և ազատում է հաստիքային աշխատողներին,
- նախագահում է Միության մասնակիցների ընդհանուր ժողովում և Վարչության նիստերում,
- իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

11. Միության աշխատանքային հարաբերությունները

11.1. Միության աշխատակիցների և Միության միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային և քաղաքացիական օրենսդրությամբ և կարող են ձևակերպվել ինչպես աշխատանքային, այնպես էլ վճարովի ծառայությունների մատուցման քաղաքացիա-իրավական պայմանագրերի ձևով:

11.2. Վարչությունը որոշում է աշխատողներին աշխատանքի ընդունելու և ազատելու կարգը, վարձատրության ձևը և չափը, աշխատանքային օրվա ռեժիմը, հանգստյան օրերի և արձակուրդների կարգը: Վարչությունն իրավունք ունի աշխատողներ ներգրավել նամատեղության կարգով:

11.3. Վարչությունն ապահովում է օրենքով սահմանված աշխատանքի նվազագույն վարձատրության չափը, աշխատանքային պայմանները և աշխատակիցների սոցիալական ապահովությունը:

12. Միության ֆինանսա-տնտեսական գործունեության վերահսկողությունը

12.1. Միության ֆինանսա-տնտեսական գործունեության վերահսկողությունը իրականացնում է վերստուգողը: Վերստուգողը ընտրվում է Միության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

12.2. Միության վերստուգողը իրավունք ունի ստուգել Միության ֆինանսա-տնտեսական գործունեությունը. ծանոթանալ բոլոր փաստաթղթերին:

12.3. Վերահսկողի պահանջով Վարչությունը պարտավոր է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, տալ պարզաբանումներ և բացատրություններ:

12.4. Միության վերստուգողը ստուգում է Միության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները և դրանց վերաբերյալ տալիս եզրակացություն:

12.5. Միության մասնակիցների ընդհանուր ժողովը հաստատում է միության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, Միության վերստուգողի եզրակավության առկայությամբ:

12.6. Միության վերստուգողը պարտավոր է պահանջել Միության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողով հրավիրել, եթե՝

- վտանգ է սպառնում միության շահերին

- հաստատվել է վարչության կողմից կատարված չարաշահում:

12.7. Միության վերստուգողի ծախսերի հատուցման կարգը, ինչպես նաև վարձատրության չափը սահմանվում է Վարչության կողմից:

13. Ֆինանսական հաշվետվությունը

13.1.Միությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է ֆինանսական և հիշատակագրական հաշվետվություններ:

13.2. Վարչությունը պատասխանատվություն է կրում Միության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա հավաստիության, տարեկան, ֆինանսական և հիշատակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Միության պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին Միության մասին տրամադրվող տեղեկությունների մասին:

14. Միության փաստաթղթերի պահպանումը

14.1. Միությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պահպանել՝

- Միության կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը, ինչպես նաև կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները,
- Միության մասնակիցների ընդհանուր ժողովի և Վարչության նիստերի արձանագրությունները,
- Միության պետական գրանցումը հավաստող փաստաթղթեր,
- Միության հաշվեկշռում գտնվող գույքի նկատմամբ Միության իրավունքները հաստատող փաստաթղթեր,
- Միության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների կանոնադրությունները,
- Միության տարեկան հաշվետվությունները,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

14.2. Վերը թվարկված բոլոր փաստաթղթերը պահվում են Միության գրասենյակում:

15. Միության վերակազմակերպումը

15.1. Միությունը կարող է վերակազմակերպվել ՀՀ Քաղ. օրենսգրքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

16.Միության լուծարումը

16.1.Միությունը լուծարվում է Միության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ձայների որակյալ մեծամասնությամբ, եթե՝

- Միությունը շեղվել է կանոնադրությամբ սահմանված իր նպատակներից,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ

«ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» իրավաբանական անձանց միության հիմնադիրների /մասնակիցների/ ցուցակ

«Իջևանի գինու գործարան» Փ Բ Ը
գրանցման հ. 67.120.00070
հասցեն՝ Իջևան, Երևանյան 9

Ի/ա Ա. Գալստյան

«Քարաշար» Ս Պ Ը
գրանցման հ. 65.110.00324
հասցեն՝ Եղեգնաձոր

Ի/ա Ա. Սկրտչյան

«Մարան» Ս Պ Ը
գրանցման հ. 65.110.00005
հասցեն՝ Եղեգնաձոր, Աբարբեկյան փ. 22-ա

Ի/ա Ա. Հարությունյան

«Գետնատուն» Ս Պ Ը
գրանցման հ. 65.110.00077
հասցեն՝ Եղեգնաձոր, Անդրանիկի փող. 3տ.

Ի/ա Ա. Բաղդասարյան

«Փարաբարի գինու գործարան» Ը Բ Ը
գրանցման հ. 99.120.00433
հասցեն՝ Էջմիածին, գ. Մուսալեռ

Ի/ա Ա. Ասատրյան

«Արարատի գինու գործարան» Ս Պ Ը
գրանցման հ. 51.110.00472
հասցեն՝ Արարատի մարզ, գ. Արարատ

Ի/ա Ա. Սարկիսյան

«Դալար» Փ Բ Ը
գրանցման հ. 52.120.0298
հասցեն՝ Արտաշատի շրջ., գ. Դալար

Ի/ա Ա. Ոսկանյան

Երևանի «Շամպայնի գինիների գործարան» Բ Բ Ը
գրանցման հ. 282.130.00431
հասցեն՝ Թբիլիսյան խճ. 20

Ի/ա Ա. Խաչոյան

«Էնոսերվիս» Ս Պ Ը
գրանցման հ. 286.110.03518
հասցեն՝ Ե. Կողբացու 42-55

Լ/ա Ա. Կարապետյան

«Սարդուրս» Ս Պ Ը
գրանցման հ. 286.110.04018
հասցեն՝ Ամիրյան 12

Լ/ա Ս. Տիգրանյան